

Տեղեկատվության բազմազանմամբ և տեղեկատվական հոսքերի ինտենսիվացմամբ բնութագրվող արդի աշխարհում էապես կարևորվում է «վիճակագրական եռանկյունու անկյունները զբաղեցնող», տարաբևեռ հակումներ ունեցող, պաշտոնական վիճակագրության երեք մասնակիցների՝ ռեսպոնդենտների, սպառողների և հարկատուների հնարավորին «մեկտեղումը», հատկապես՝ ազգային և միջազգային չափանիշներով պերցեպցիայի (կոմունիկացիոն ունակությունների համահարթեցման) պահանջների տեսանկյունով:

ՀՀ ԱՎԾ-ն շնորհակալություն է հայտնում բոլոր ռեսպոնդենտներին (տեղեկատվություն տրամադրողներին), որոնց կողմից տրամադրված տեղեկատվության վրա է խարսխված սույն վիճակագրական հրապարակումը և ողջունում նրանց ու հարկատուների, որպես վիճակագրական տեղեկատվության սպառողների, արձագանքներն ու առաջարկները վերոհիշյալ նկատառումներով վիճակագրական հրապարակումների հետագա կատարելագործման համար:

Հրապարակումների հետագա կատարելագործման համար առաջարկությունները և մեկնաբանությունները, խնդրում ենք ներկայացնել ՀՀ ԱՎԾ Վիճակագրական տեղեկատվության տարածման, մարկետինգի և հասարակայնության հետ կապերի բաժին:

375010, Երևան, Հանրապետության պողոտա, Կառավարական տուն, 3

Հեռ. (374 1) 52-33-56, 52-42-45

Ֆաքս (374 1) 52-19-21

E-mail info@armstat.am

Բովանդակություն

| | |
|--|----|
| 1. Բնակչության թվաքանակը և տեղաբաշխումը..... | 4 |
| 2. Բնակչության կազմը | 7 |
| 3. Բնակչության բնական շարժը | 8 |
| 4. Բնակչության ծնելիությունը | 9 |
| 5. Ամուսնություններն ու ամուսնալուծությունները | 11 |
| 6. Մահացությունը և դրա պատճառները... .. | 12 |
| Մեթոդաբանական պարզաբանում | 15 |

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

1. ՀՀ բնակչության բնական շարժի հիմնական ցուցանիշներն ըստ մարզերի, 2004թ.....16
2. ՀՀ բնակչության մահացությունն ըստ մահվան հիմնական պատճառների

1. Բնակչության թվաքանակը և տեղաբաշխումը

Բնակչության ընթացիկ հաշվառումն իրականացվում է վերջին մարդահամարի արդյունքով ստացված մշտական բնակչության հիման վրա, որն անցկացվել է 2001թ. հոկտեմբերի 10-19-ը: Այն անկախության պայմաններում անցկացված Հայաստանի առաջին ազգային մարդահամարն է, որի արդյունքում ստացված տվյալներով, հաշվառման պահին առկա բնակչության թվաքանակը կազմել է 3002.6 հազ. մարդ, իսկ մշտական բնակչության թվաքանակը՝ 3213.0 հազ.մարդ:

Վիճակագրական մարմինների կողմից իրականացվող ընթացիկ հաշվառմամբ, բնակչության թվաքանակի տվյալներն արդիականացվում են եռամսյակային պարբերականությամբ, հաշվետու ժամանակաշրջանում, բնակչության բնական աճի (գրանցված ծնունդների և մահերի տարբերության)¹ և միգրացիայի մնացորդի (հաշվառման կանգնած և հաշվառումից դուրս գրվածների տարբերության)² տվյալների հիման վրա: Վերջինիս արդյունքներով, 2004թ. հունվարի 1-ի դրությամբ արձանագրվել է ՀՀ մշտական բնակչության թվաքանակի հավելած, որը սկսած 1993 թվականից (ըստ մարդահամարի արդյունքների հիման վրա վերահաշվարկված մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշների), միայն նվազման միտում էր դրսևորել: 2005թ. հունվարի 1-ի դրությամբ հանրապետության մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը կազմել է 3215.8 հազ. մարդ՝ արձանագրելով հավելած՝ 3.6 հազ.-ով, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Ստորև ներկայացվում է ՀՀ մշտական բնակչության թվաքանակի դինամիկան միջմարդահամարային ժամանակահատվածի համար՝ վերահաշվարկված ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով ստացված մշտական բնակչության թվաքանակի հիման վրա:

Աղյուսակ 1.1

Հայաստանի Հանրապետության մշտական բնակչությունը 1990-2005 թթ. (տարեսկզբին)

(հազ.մարդ)

| Տարիներ | Ամբողջ բնակչությունը (հազ. մարդ) | այդ թվում՝ | | Ամբողջ բնակչության նկատմամբ տոկոսներով | |
|---------|----------------------------------|------------|-----------|--|-----------|
| | | քաղաքային | գյուղական | քաղաքային | գյուղական |
| 1989 | 3448.6 | 2358.0 | 1090.6 | 68.4 | 31.6 |
| 1990 | 3514.9 | 2416.8 | 1098.1 | 68.8 | 31.2 |
| 1991 | 3574.5 | 2473.6 | 1100.9 | 69.2 | 30.8 |
| 1992 | 3633.3 | 2503.3 | 1130.0 | 68.9 | 31.1 |
| 1993 | 3463.7 | 2358.8 | 1104.9 | 68.1 | 31.9 |
| 1994 | 3356.7 | 2274.9 | 1081.8 | 67.8 | 32.2 |
| 1995 | 3260.3 | 2166.4 | 1093.9 | 66.4 | 33.6 |
| 1996 | 3248.8 | 2149.1 | 1099.7 | 66.1 | 33.8 |
| 1997 | 3246.0 | 2138.4 | 1107.6 | 65.9 | 34.1 |
| 1998 | 3238.2 | 2122.9 | 1115.3 | 65.6 | 34.4 |
| 1999 | 3232.1 | 2111.6 | 1120.5 | 65.3 | 34.7 |

¹ ՀՀ արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման վարչության (ՔԿԱԳ-ի) տարածքային բաժիններից ստացված ծնվածների և մահացածների ակտերի (երկրորդ օրինակների) հիման վրա:


² ՀՀ կառավարությանն առընթեր ոստիկանության տարածքային անձնագրային բաժինների կողմից բնակչության հաշվառման (գրանցման) և դուրս գրման տվյալների հիման վրա լրացվող «Եկողի վիճակագրական հաշվառման կտրոն»-ների և «Սեկնողի վիճակագրական հաշվառման կտրոն»-ների մշակմամբ ստացված տվյալներով:

| Տարիներ | Ամբողջ բնակչությունը (հազ. մարդ) | այդ թվում՝ | | Ամբողջ բնակչության նկատմամբ տոկոսներով | |
|---------|----------------------------------|------------|-----------|--|-----------|
| | | քաղաքային | գյուղական | քաղաքային | գյուղական |
| 2000 | 3226.9 | 2095.8 | 1131.1 | 64.9 | 35.1 |
| 2001 | 3215.3 | 2076.3 | 1139.0 | 64.6 | 35.4 |
| 2001*) | 3213.0 | 2066.1 | 1146.9 | 64.3 | 35.7 |
| 2002 | 3212.9 | 2065.6 | 1147.3 | 64.3 | 35.7 |
| 2003 | 3210.3 | 2062.2 | 1148.1 | 64.2 | 35.8 |
| 2004 | 3212.2 | 2061.7 | 1150.5 | 64.2 | 35.8 |
| 2005 | 3215.8 | 2062.3 | 1153.5 | 64.1 | 35.9 |

Գծապատկեր 1.1

Հայաստանի Հանրապետության մարզերի բնակչության թվաքանակները 1989- 2005թթ.

(հազ. մարդ)



*) ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով:

Հարկ է նշել, որ հանրապետության մշտական բնակչության թվաքանակը 2005թ. տարեկազմին՝ 1989թ. հունվարի 1-ի համեմատ, նվազել է ավելի քան 232.8 հազ. մարդով, կամ 6.8%-ով, իսկ հանրապետության առանձին մարզերում բնակչության թվաքանակի ցուցանիշների նվազումները տարբեր դրսևորումներ են ունեցել: Այսպես, բնակչության թվաքանակի նվազումն առանձնապես զգալի չափեր է ունեցել Երևան քաղաքում (114.8 հազ.մարդով, կամ 9.4 %-ով), Լոռու (75.1 հազ.մարդով կամ 20.9%-ով) և Շիրակի մարզերում (47.5 հազ.մարդով կամ 14.4 %-ով), համեմատաբար մեղմ չափեր է ունեցել Կոտայքի (11.6 հազ. մարդով կամ 4.1%-ով), Վայոց ձորի (3.7 հազ.մարդով կամ 6.5%-ով) և Տավուշի (10.4 հազ.մարդով կամ 7.2%-ով) մարզերում, իսկ Արագածոտնի (2.5%-ով), Արարատի (5.4%-ով), Արմավիրի (1.9%-ով), Սյունիքի (4.7%-ով) և Գեղարքունիքի (0.3%-ով) մարզերի բնակչության թվաքանակի ցուցանիշներում արձանագրվել է աճ:

Միաժամանակ, ՀՀ 2001թ. արդյունքով ստացված մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը շուրջ 590 հազ.մարդով պակաս էր 2001թ. տարեկազմի (1979 թ. մարդահամարի հիմքով վարվող ընթացիկ հաշվառմամբ) դրությամբ ստացված

մնացորդային ցուցանիշից: Միջմարդահամարային տարիների ընթացքում բնակչության թվաքանակի ընթացիկ հաշվառման ցուցանիշում կուտակված մնան չափերի հասնող տարբերությունը հիմնականում պայմանավորված էր 1990-ական-ներին հանրապետությունում ստեղծված բարդ քաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակի արդյունքում մեծ ծավալների հասնող միգրացիոն շարժով, որի վերաբերյալ տեղեկատվությունը՝ միգրացիայի հաշվառման գործող համակարգի անկատարության հետևանքով, դուրս էր մնացել վիճակագրության տեսադաշտից:


1989-2005թթ. ընթացքում փոփոխվել է նաև քաղաքային և գյուղական բնակչության կառուցվածքային հարաբերակցությունը: Այսպես, եթե 1989թ. տարեսկզբի դրությամբ քաղաքային բնակչության տեսակարար կշիռը կազմել է 68.4%, ապա 2005թ.-ին՝ 64.1%, իսկ գյուղական բնակչությանը, համապատասխանաբար՝ 31.6% և 35.9%:

2. Բնակչության կազմը

Բնակչության ընթացիկ հաշվառման տվյալների համաձայն՝ 2005թ. տարեսկզբի դրությամբ հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակի 23.6%-ը կազմել է 0-15 տարեկան, 63.3%-ը աշխատունակ տարիքի և 13.1%-ը աշխատունակ տարիքից բարձր բնակչությունը, այն դեպքում, երբ 1990թ.-ին այդ ցուցանիշները, համապատասխանաբար, կազմել են՝ 32.2%, 58.7% և 9.1%: Ստորև ներկայացվում է բնակչության կառուցվածքը հիմնական տարիքային խմբերով, քաղաքային, գյուղական բաշխումով:

Գծապատկեր 2.1


Բնակչության հիմնական տարիքային կառուցվածքը 2004թ.
(տարեվերջին)



Ընդ որում, հարկ է նշել, որ գյուղական բնակչության աշխատունակ տարիքից ցածր բնակչությունը 4.9 %-ային կետով, իսկ աշխատունակ տարիքից բարձր բնակչությունը 0.5%-ային կետով բարձր է քաղաքայինից, ի հաշիվ որոնց էլ գյուղական աշխատունակ տարիքի բնակչության տեսակարար կշիռը 5.4%-ային կետով ցածր է քաղաքայինից: 2005թ. տարեսկզբի դրությամբ ամեն 1000 աշխատունակ տարիքի բնակչությանը բաժին է ընկել 594 երեխա (0-15 տարեկան) և կենսաթոշակային տարիքի (աշխատունակ տարիքից բարձր) բնակչություն:

ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով հանրապետությունում տնային տնտեսությունների ընդհանուր քանակը կազմել է 779.3 հազ., որից 778.6 հազ.-ը անհատական տնային տնտեսություններն են, իսկ 0.7հազ.-ը՝ խմբային (ինստիտուցիոնալ): Անհատական տնային տնտեսությունների անդամների միջին թվաքանակը կազմել է 4.1 մարդ, քաղաքներում՝ 4.0, իսկ գյուղական վայրերում՝ 4.4 մարդ:

Հայաստանի Հանրապետության տնային տնտեսություններն ըստ կազմի




3. Բնակչության բնական շարժը

Եթե 1990-2002թթ.-ին հանրապետությունում արձանագրվել են բնական հավելանքի և՛ բացարձակ, և՛ հարաբերական ցուցանիշների նվազում, ապա 2003թ.-ից սկսած, նախորդ տարվա նկատմամբ, արձանագրվել է դրանց որոշակի աճ: Այսպես, 2003թ. ՀՀ բնական հավելանքի բացարձակ թվաքանակը կազմել է 9.8 հազ.մարդ, 2004թ.՝ 11.8 հազ.մարդ, իսկ բնական հավելանքի գործակիցը, 1000 բնակչի հաշվով, համապատասխանաբար՝ 3.1 պրոմիլ և 3.7 պրոմիլ (2002թ. համապատասխանաբար՝ 6.7 հազ. մարդ և 2.1 պրոմիլ, իսկ 1990թ.՝ 57.9 հազ.մարդ և 16.3 պրոմիլ):

Գծապատկեր 3.1

Հայաստանի Հանրապետության բնակչության բնական հավելանքի դինամիկան 1990-2004 թթ.

(հազ. մարդ)



Հիշատակված ժամանակահատվածում հանրապետության բնակչության թվաքանակի ցուցանիշը, ի հաշիվ բնական հավելանքի, ավելացել է 357.5 հազ.-ով կամ 11.1 %-ով, որից 199.0 հազ.-ի աճը կամ բնական հավելանքի 55.7 %-ն արձանագրվել է քաղաքային բնակչության թվաքանակի ցուցանիշում:

Բնական շարժի ցուցանիշների առանձնահատկություններն ըստ ՀՀ մարզերի ներկայացված է հավելված 1-ում:

4. Բնակչության ծնելիությունը

Եթե 1990-2001թթ. միջև ընկած ժամանակահատվածում արձանագրվել էր ծնելիության ցուցանիշի անկում՝ 2001թ. ծնվածների թվաքանակը 1990թ. համեմատ նվազել էր 47.8 հազ. մարդով, կամ 40.2%-ով, իսկ ծնելիության գործակիցը՝ 12.5 պրոմիլային կետով, ապա 2002 թ.-ից ծնելիության ցուցանիշներում (թե՛ բացարձակ, և թե՛ հարաբերական) արձանագրվել է աճ: 2004թ. ծնելիության գործակիցը կազմել է 11.7 պրոմիլ, 2003թ. նույն ժամանակաշրջանի 11.2 պրոմիլի համեմատ:

Աղյուսակ 4.1

Հայաստանի Հանրապետության ծնելիության ընդհանուր մակարդակը բնութագրող ցուցանիշների դինամիկան

| Տարիներ | Ծնվածների թվաքանակը (հազ. մարդ) | | | Ծնելիության գործակիցը 1000 բնակչի հաշվով*) | | |
|---------|------------------------------------|-------|-------|---|-------|-------|
| | ընդամենը | քաղաք | գյուղ | ընդամենը | քաղաք | գյուղ |
| 1990 | 79.9 | 50.2 | 29.7 | 22.5 | 20.5 | 27.0 |
| 1991 | 77.8 | 48.4 | 29.4 | 21.6 | 19.5 | 26.3 |
| 1992 | 70.6 | 44.0 | 26.6 | 19.9 | 18.1 | 23.8 |
| 1993 | 59.0 | 35.3 | 23.7 | 17.3 | 15.2 | 21.7 |
| 1994 | 51.1 | 29.9 | 21.2 | 15.5 | 13.5 | 19.5 |
| 1995 | 49.0 | 29.2 | 19.8 | 15.0 | 13.5 | 18.1 |
| 1996 | 48.1 | 29.4 | 18.7 | 14.8 | 13.7 | 17.0 |
| 1997 | 43.9 | 26.9 | 17.0 | 13.5 | 12.6 | 15.3 |
| 1998 | 39.4 | 24.6 | 14.8 | 12.2 | 11.6 | 13.3 |
| 1999 | 36.5 | 22.4 | 14.1 | 11.3 | 10.7 | 12.5 |
| 2000 | 34.3 | 21.4 | 12.9 | 10.6 | 10.3 | 11.4 |
| 2001 | 32.1 | 20.3 | 11.8 | 10.0 | 9.8 | 10.3 |
| 2002 | 32.2 | 20.8 | 11.4 | 10.1 | 10.1 | 10.0 |
| 2003 | 35.8 | 22.6 | 13.2 | 11.2 | 11.0 | 11.5 |
| 2004 | 37.5 | 23.6 | 18.9 | 11.7 | 11.5 | 12.1 |

*) 1990-2001թթ. գործակիցները վերահաշվարկվել են ՀՀ 2001թ. մարդահամարի արդյունքներով

վերահաշվարկված բնակչության թվաքանակի ցուցանիշներով:

Ծնելիության մակարդակի նվազումն իր ազդեցությունն է թողել նաև կանանց ծնելիության տարիքային գործակիցների վրա, ինչպես տարիքային առանձին խմբերում, այնպես էլ ամբողջապես ծնունակ տարիքում: Հանրապետությունում, դեռևս 1986թ. սկսած, ծնելիության գործակցի նվազումն արգելակվել էր 1989-1990 թթ.՝ երկրաշարժի հետևանք հանդիսացող «փոխհատուցման» հայտնի երևույթով պայմանավորված: Հետագա տարիներին շարունակվել էր ծնելիության գործակցի տարեցտարի նվազումը, և 2004թ. ծնելիության գումարային գործակիցը (*երեխաների այն քանակը, որը կծնի կինն իր պտղաբերության ողջ շրջանում*) կազմել էր 1.38՝ 1990թ. 2.620-ի համեմատ:

Հանրապետությանը միշտ բնութագրական է եղել քաղաքայինի համեմատ՝ գյուղական բնակչության ծնելիության ավելի բարձր մակարդակը: Այսպես, 2004թ. քաղաքային բնակչության ծնելիության գումարային գործակիցը կազմել է 1.323, իսկ գյուղականինը՝ 1.493: Ընդ որում, ծնելիության գործակիցների տարբերությունը բնակչության այդ երկու խմբերի միջև մեծ է կանանց 15-24 տարիքային խմբերում:

Հատկանշական է նաև այն փաստը, որ 20-24 տարիքային խմբի ծնելիության գործակիցը միշտ եղել և մնում է ամենաբարձրը:

Աղյուսակ 4.2

Կանանց ծնելիության տարիքային գործակիցները, 2004թ.

| | Ծնվածների միջին տարեկան թվաքանակը, ըստ կանանց համապատասխան տարիքային խմբերի (1000 կնոջ հաշվով) | | | | | | | | Ծնելիության գումարային գործակիցը |
|-----------|--|-------|-------|-------|-------|-------|-------|-------|----------------------------------|
| | 15-19 | 20-24 | 25-29 | 30-34 | 35-39 | 40-44 | 45-49 | 15-49 | |
| Ընդամենը | 29.8 | 128.5 | 76.1 | 30.4 | 10.6 | 2.1 | 0.1 | 41.0 | 1.380 |
| Քաղաքային | 24.4 | 116.0 | 78.5 | 33.0 | 12.0 | 2.1 | 0.1 | 39.1 | 1.323 |
| Գյուղական | 38.5 | 153.6 | 71.2 | 25.1 | 8.2 | 2.1 | 0.2 | 44.9 | 1.493 |

Մոր միջին տարիքը երեխայի ծննդյան ժամանակ 2004թ. կազմել է 24.1 տարեկան, իսկ առաջին երեխայի ծննդյան ժամանակ՝ 22.5 տարի, 1990թ. համապատասխանաբար կազմել են՝ 25.3 և 22.8 տարեկան:

Հարկ է նշել, որ ըստ ծննդի հերթականության՝ երրորդ և բարձր կարգի ծնվածները կազմում են հանրապետության կենդանածինների ընդհանուր թվաքանակի 14.0 % -ը, 1990թ.-ի 30.3%-ի համեմատ:

5. Ամուսնություններն ու ամուսնալուծությունները

Բնակչության վերարտադրության վրա իր ազդեցությունն ունի նաև բնակչության ամուսնական վիճակի փոփոխությունը: Եթե 70-ականներին և 80-ականների սկզբին տեղի էր ունենում գրանցված ամուսնությունների աճ, ապա 1985թ. սկսած (բացառությամբ 1989թ.) ամուսնությունների քանակն էականորեն նվազեց: Այսպես, 1990թ. հանրապետությունում կազմավորված ավելի քան 28 հազ. նոր ամուսնական զույգերի դիմաց՝ ամուսնալուծվել են ավելի քան 4 հազ. զույգեր, 2004թ. այդ ցուցանիշները, համապատասխանաբար, կազմել են՝ 17.0 հազ. և 2.0 հազ.: Հարկ է նշել, որ արձանագրված ամուսնությունների աճը 2004թ.-ին՝ 2001թ.-ի համեմատ, կազմել է 38.0%, իսկ ամուսնալուծությունների դեպքերը, որոնք նվազման միտում են ունեցել մինչև 1999թ.-ը, 2000թ.-ից սկսած աճել են (2004թ.-ին՝ 2000թ. համեմատ աճը կազմել է 46.5%):

Ընտանիքի վերարտադրողականությունն ապահովելու տեսանկյունից կարևորվում է նաև ամուսնացող տղամարդկանց և կանանց տարիքը: Ամուսնությունների միջին տարիքը տղամարդկանց մոտ 2004թ. կազմել է 28.4, իսկ կանանց մոտ 24.0 տարին, իսկ առաջին ամուսնության միջին տարիքը, համապատասխանաբար, 27.5 և 23.5 տարին:

2004թ. ամուսնալուծությունների ընդհանուր քանակից՝ ամուսնալուծվածների 50.5 %-ը երեխաներ չեն ունեցել, 19.7 %-ը ունեցել է մեկ երեխա, իսկ 29.8 %-ը՝ երկու և ավելի երեխաներ: Ամուսնալուծությունների հետևանքով 2004թ. շուրջ 1.4 հազ. երեխաներ (մինչև 18 տարեկան) զրկվել են ծնողներից մեկի ծնողական խնամքից:


6. Մահացությունը և դրա պատճառները

Բնակչության բնական շարժը բնութագրող կարևորագույն ցուցանիշ է հանդիսանում նաև մահացությունը:

Գծապատկեր 6.1

Հայաստանի Հանրապետության բնակչության մահացության դինամիկան 1990-2004թթ.

(հազ.մարդ)



1990թ. սկսած հանրապետություն տեղի է ունեցել մահացության մակարդակի աճ, հիմնականում բնակչության կենսամակարդակի նվազմամբ, ինչպես նաև աշխատունակ տարիքից բարձր բնակչության (որոնց մահացության գործակիցն ավելի բարձր է) տեսակարար կշռի աճով պայմանավորված:

2004թ. արձանագրվել է 25679 մահվան դեպք, իսկ մահացության գործակիցը՝ 1000 բնակչի հաշվով, կազմել է 8.0 պրոմիլ, նախորդ տարվա նկատմամբ նվազել է 0.1 պրոմիլային կետով կամ 1.3 տոկոսով:

Վիճակագրական տվյալների վկայությամբ, տարեցտարի ավելանում է մահացությունն արյան շրջանառության համակարգի հետ կապված հիվանդություններից և չարորակ նորագոյացություններից: Այսպես, 1990թ.-ին, 100000 բնակչի հաշվով, վերը նշված պատճառներից մահացողների թվաքանակը, համապատասխանաբար կազմել է՝ 306 և 98 մարդ, իսկ 2004թ.՝ 438 և 141: Ավելանում է նաև մահացությունն էնդոկրին համակարգի, սննդակարգի շեղումների, նյութափոխանակության խանգարումների հիվանդություններից, հատկապես, շաքարախտից (դիաբետ), շնչառական և մարտոդական օրգանների հիվանդություններից: Հանրապետությունում դեռևս բարձր է և աճման միտում ունի կանանց մոտ կրծքագեղձի նորագոյացությունների պատճառով մահացության մակարդակը:

Մահացության ընդհանուր թվաքանակում առկա է դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից մահացության տեսակարար կշռի նվազում


(տես՝ հավելված 2), այդ թվում ինքնասպանություններին ու սպանություններին: Վերջինս, սակայն, ավելի բարձր է տղամարդկանց մոտ:

Մահացության կառուցվածքում վերջին տարիներին արձանագրվել է մանկամահացության մակարդակը բնութագրող ցուցանիշի նկատելի նվազում: Այսպես, 1990թ. հանրապետությունում կյանքի առաջին տարում երեխաների մահացության գործակիցը 18.5 պրոմիլ էր, իսկ 2004թ. այն կազմել 11.6 պրոմիլ, 1000 կենդանածնի հաշվով:

Գծապատկեր 6.2

Մանկամահացության գործակիցները Հայաստանի Հանրապետության մարզերում 1990 և 2004թթ.

(1000 կենդանածնի հաշվով)



Միաժամանակ հարկ է նշել, որ տարբեր գործոններով պայմանավորված, վիճակագրական հաշվառմամբ չեն ընդգրկվում հանրապետությունում տեղի ունեցող մանկամահացության բոլոր դեպքերը (ինչը նվազագույնի հասցնելու նպատակով միջոցառումների համալիր ծրագիր է մշակվել ՀՀ առողջապահության նախարարության կողմից՝ ՀՀ արդարադատության նախարարության և ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության հետ համագործակցված), որի հետևանքով մանկամահացության պաշտոնական ցուցանիշն արտացոլում է միայն վարչական աղբյուրներում գրանցված մահերը:

2004թ. կյանքի առաջին տարում մահացած նորածինների 45.3 %-ը մահացել է պերինատալ շրջանում առաջացած վիճակից (0-6 օրական), 25.8 %-ը՝ բնածին արատներից, 12.5 %-ը՝ շնչառական օրգանների հիվանդություններից, որոնց կեսից ավելին՝ վերին շնչառական ուղիների հիվանդություններն են:

2004թ. հանրապետությունում արձանագրվել է մայրամահացության 10 դեպք, որով պայմանավորված՝ մայրամահացության գործակիցը՝ 100 000 կենդանի ծնվածի հաշվով, կազմել է 22.4: Մայրական մահացության հիմնական պատճառները հղիության հետ կապված բարդություններն են ծննդյան և ետծննդյան ժամանակահատվածում:

Հայաստանի Հանրապետության բնակչության բնական շարժի ցուցանիշներն ըստ մարզերի, 2004թ.

| | Բնակչության թվաքանակը, տարեվերջին հազ. մարդ | | | Ծնվածներ | | | Մահեր | | | Անուսնոթյուն | Անուսնալուծություն |
|--------------------|---|----------|----------|----------|--------|--------|----------|--------|--------|--------------|--------------------|
| | ընդամենը | արական*) | իգական*) | ընդամենը | արական | իգական | ընդամենը | արական | իգական | | |
| ՀՀ | 3215.8 | 1550.6 | 1665.2 | 37520 | 20328 | 17192 | 25679 | 13248 | 12431 | 16975 | 1968 |
| ք.Երևան | 1102.9 | 514.8 | 588.1 | 11972 | 6391 | 5581 | 8894 | 4574 | 4320 | 5961 | 1025 |
| Արագածոտն | 139.1 | 68.3 | 70.8 | 1755 | 975 | 780 | 1128 | 583 | 545 | 691 | 50 |
| Արարատ | 273.4 | 134 | 139.4 | 3231 | 1790 | 1441 | 1981 | 1014 | 967 | 1150 | 94 |
| Արմավիր | 278.2 | 136.5 | 141.7 | 3387 | 1844 | 1543 | 1991 | 1039 | 952 | 1587 | 109 |
| Գեղարքունիք | 239.1 | 117.3 | 121.8 | 3091 | 1737 | 1354 | 1694 | 836 | 858 | 1661 | 55 |
| Լոռի | 283.9 | 139 | 144.9 | 3341 | 1793 | 1548 | 2645 | 1348 | 1297 | 1306 | 176 |
| Կոտայք | 274.2 | 134.3 | 139.9 | 3347 | 1778 | 1569 | 1911 | 1045 | 866 | 1486 | 150 |
| Շիրակ | 281.7 | 137.9 | 143.8 | 3387 | 1808 | 1579 | 2513 | 1287 | 1226 | 1333 | 133 |
| Սյունիք | 153 | 75.1 | 77.9 | 1664 | 923 | 741 | 1220 | 633 | 587 | 758 | 106 |
| Վայոց ձոր | 55.9 | 27.5 | 28.4 | 662 | 384 | 278 | 430 | 228 | 202 | 279 | 25 |
| Տավուշ | 134.4 | 65.9 | 68.5 | 1683 | 905 | 778 | 1272 | 661 | 611 | 763 | 45 |

*) հաշվարկային ցուցանիշներ:

**Հայաստանի Հանրապետության բնակչության
մահացությունն ըստ մահվան հիմնական պատճառների
(ըստ ՀՀ ՔԿԱԳ-ի տարածքային բաժիններից ստացված մահվան ակտերի)**

| | 1990թ. հազ.մարդ | Տոկոսներով ընդհանուրի նկատմամբ | 2004թ. հազ.մարդ | Տոկոսներով ընդհանուրի նկատմամբ |
|---|--------------------|--------------------------------------|--------------------|--------------------------------------|
| Բոլոր պատճառներից մահացածների թվաքանակը | 21993 | 100 | 25679 | 100 |
| դրանցից ըստ` | | | | |
| արյան շրջանառության համա- կարգի հիվանդություններից | 10843 | 49.3 | 14077 | 54.8 |
| դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնաս- վածքներից | 1972 | 9.0 | 1145 | 4.5 |
| այդ թվում` | | | | |
| ինքնասպանություններից | 93 | 0.4 | 57 | 0.2 |
| սպանություններից | 203 | 0,9 | 55 | 0.2 |
| չարորակ նորագոյացություններից | 3484 | 15.8 | 4497 | 17.5 |
| շնչառական օրգանների հիվանդություններից | 1784 | 8.1 | 1512 | 5.9 |
| մարտոդական օրգանների հիվանդություններից | 747 | 3.4 | 979 | 3.8 |
| վարակային և մակարոժային հիվանդություններից | 462 | 2.1 | 233 | 0.9 |
| Էնդոկրին համակարգի, սննդա- կարգի շեղումների, նյութափո- խանակության խանգարումների և ինունիտետի բացակայության հիվանդություններից | 565 | 2.6 | 1672 | 6.5 |
| այլ հիվանդություններից | 2136 | 9.7 | 1564 | 6.1 |